8055

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵ՛Ք

Հ. Կ. (Բ). ԿՈՒՍ. Կ. Կ.-Ի

IV ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Կ. Կ. ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՅԿՈՀ(47.925)
Հ-24

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԳԱՆ—1928

ՎՐԻՊԱԿ

Առաջին եջում սխալմամբ տպված է «Բանաձևերը»

պետք է կարդալ—«ԲԱՆԱՁԵՎԸ»

2 4 SEP 2006
1 DEC 2009
3КП2(47.925)
Z-24

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵ՛Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ
Կ. (Բ) Կ. Կ.Կ-ի 4-րդ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

Կ.Կ.-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված միաձայն՝ մի ձայնի ձեռնպահությամբ)

145

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1928

8055

18 SEP 2013

8938-53

ЗКП2(45)325) Пленум ЦК КПСС

Կոմ/կուսակ պլենում

П-116	12/IX	80	

8838-53

Գրառեպվար № 1000բ Տիրաժ 2000

Պետհրատի 2-րդ տպարան Երևանում - 1072

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. (Բ) Կ. Կ.-Ի 4-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՎԸ

Կ. Կ.-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑՄԱՆ ԱՌԹԻՎ

(Ընդունված միաձայն՝ մի ձայնի ձեռնպահությամբ)

Լսելով ընկ. Կոստանյանի զեկույցումը ԿԿ-ի նախագահության աշխատանքների մասին, Հայաստանի ԿԿ (բ) ԿԿ-ի պլենումը հավանություն է տալիս նախագահության քաղաքական և կազմակերպչական դծին և լիովին բավարար է գտնում նրա կատարած աշխատանքը:

1. Պլենումն արձանագրում է, որ ԿԿ-ի նախագահությունը հաշվետու ժամանակաշրջանում ճիշտ է ուրվագծել նախկին ղեկավարության կոպիտ ֆաղաֆական վրիպումներն ու սկզբունքային սխալները վնասակարորեն ուղղելու միջոցները՝ թե իդեոլոգիական ճակատում և թե տնտեսական շինարարության ասպարիզում: Նախագահությունը արմատախիլ է արել ուկլոնիստական այն տենդենցները, որոնք խեղում ու վիժեցնում էին կոմկուսի բայլշևիկյան ֆաղաֆականությունը և անխուսափելիորեն կվիժեցնեին յեթե ղեկավարությունը ժամանակին վերանորոգված չլիներ:

2. Նախկին ղեկավարության սխալների բնույթը գնահատելով ԿԿ-ի պլենումը ամբողջապես և լիովին արտահայտում է Հայաստանի կուսակցական կազմակերպությունների կամքը: Կուսակոմիտեների (Ցերևան, Լենինական, Լոռի-Փամբակ, Ալլահվերդի և այլն) և բջջային բազմաթիվ ժողովների բանաձևերը՝ դեռ ԿԿ-ի պլենումից շատ առաջ, հին ղեկավարության սխալները վորակել են վորպես ուկլոնիզմի տենդենցների արտահայտություն:

3. Նշելով ԿԿ-ի նախագահության կատարած մեծ աշխատանքը, վորի նպատակն է յեղել կուսակցության շարքերը համախմբել ԿԿ-ի շուրջը. և տնտեսական հարցերում ու իդեոլոգիական ճակատում կուսակցության մեջ ճիշտ ուղղություն ստեղծել, ինչպես և այն աշխատանքը, վոր կատարել է վերջ տալու համար կուսակցության շարքերում նկատված հիվանդագին յերևույթներին, վորոնք զարգացել էին մասնավորապես ներկուսակցական յերկարատև ու սուր պայքարի պրոցեսում, պլենումը հանձնարարում է ԿԿ-ի նախագահության ամենավճռական միջոցներ ձեռք առնել այն անձանց նկատմամբ, վորոնք կաշխատեն խանգարել կուսակազմակերպության

աշխատանքի կանոնավոր ընթացքը և չարունակել առաջվա նման աշխատանքի լծել այն բոլոր ընկերներին, վորոնք պատրաստ են խոստովանելու իրենց սխալները և կատարյալ համերաշխությամբ աշխատել Կենտրոնական Կոմիտեի գծով:

II.

4. ԿԿ-ի պլենումը գտնում է, վոր մեր տնտեսական շինարարության հիմնական սխալներն ու թերությունները բղխում էին այն պարագայից, վոր միանգամայն անբավարար է լեղել և հաճախ բացակայել է կուսակցամակերպության և մանավանդ ղեկավարող կուսորգանների ղեկավարությունը յերկրի տնտեսական շինարարության ասպարիզում, տնտեսությունը վարվել է առանց պլանի և պարտիզանական յեղանակով, ղեկավարող կազմակերպություններում գոյություն են ունեցել փակ տնտեսության վորոշ տենդենցներ և վերջապես մի շարք կարևորագույն ղեկավարող որգաններին մեջ տիրապետել են՝ անհոգություն դեպի գործը, բյուրոկրատիզմ, անտնտեսավարություն, անպատասխանատվություն և այլ հիվանդագին յերևույթներ:

ԿԿ-ի պլենումն անհրաժեշտ է համարում առանձնապես շեշտելու, վոր նախկին ղեկավարությունը բավարար ուշադրություն չի նվիրել տնտեսավար ղեկավարող աշխատակիցների կադրեր ստեղծելու, դաստիարակելու և նրանց կանոնավոր ոգտագործելու աշխատանքին:

Այս բոլորի արդյունքն են՝ բոլորովին անձեռնտու և անչափ վատ ծախսումների փաստերը, նախահաշիվների միանգամայն անթույլատրելի խախտումները, խնամարկային տրամադրությունների ու կորզողական հոգեբանության զարգացումը:

5. Այլահվերդիի և Ղափանի հանքերի հետազոտումը հայտարերեց մի շարք խոշորագույն բացեր, այն է՝ Շախտիի գործի տարբեր՝ չարարկումներ, անտնտեսավարություն, անփույթ վերաբերմունք դեպի հիմնական շինարարությունը և դեպի ներմուծվող տարբավորումը, հանցագործ վերաբերմունք դեպի աշխատավարձի ու բնակշինարարության հարցերը: Բանվորական լայն խավերը անհրաժեշտ չափով չեն գրավվել արտադրության հիմնական խնդիրների լուծման աշխատանքին (ինքնարժեքի իջեցումը, արտադրության ռացիոնալացումը, բանվորների կենցաղի բարվոքումը և այլն): Պլենումը նշում է, վոր չնայած հանքերի բանվորները բազմիցս հայտարարել են վերոհիշյալ բոլոր բացերի և թերությունների մասին, այնուամենայնիվ վարչությունը և տնտեսական ու կուսակցական ղեկավարող կազմակերպությունները ուշիմ

չեն յեղել և յերբեմն ել անտարբեր վերաբերմունք են ցույց տվել բանվորների բողոքներին ու ցուցումներին:

6. Գործարանա-զավոդային յեռանկյունին (բջիջի բյուրոն, պրոֆորգանները և վարչությունը) ձեռնարկության մեջ իր կատարած աշխատանքը բավարար չափով չի համաձայնեցրել և չի ըմբռնել այդ որգաններից յուրաքանչյուրի խնդիրները: Բջիջների բյուրոները, ինչպես և բանվորների պրոֆորգանները անմասն եյին արտադրության ղեկավարության: Արտադրական խորհրդակցությունների աշխատանքը պլանազուրկ եր և նրանց առաջարկությունների իրագործման հանդեպ տիրող միանգամայն անուշադիր վերաբերմունքի պատճառով, գործնական արդյունք չեր տալիս:

Միևնույն ժամանակ ԿԿ-ի պլենումը նշում է, վոր մասնագետներին նպատակահարմար կերպով ոգտագործելու, նրանց և տնտեսավար կոմունիստների ու գործարանա-զավոդային մասսայական կազմակերպությունների միջև ուղիղ փոխհարաբերություններ հաստատելու վերաբերմամբ չեն կենսագործվել վերադաս կուսորգանների վորոշումները:

7. Ցելնելով վերոհիշյալից, ԿԿ-ի պլենումը հանձնարարում է նախագահության՝ իր հետագա աշխատանքի ընթացքում ղեկավարվել հետևյալով.

ա) Հայաստանում սոցիալիստական շինարարության կանոնավոր ծավալումն ապահովելու նպատակով, մեծագույն չափով ուժեղացնել կուսակցական որգանների (սկսած բջիջից մինչև ԿԿ-ը) ղեկավարությունը տնտեսական աշխատանքի ասպարիզում, ձգտելով, վոր տնտեսական և վո՛չ մի քիչ թե չատ խոշոր ձեռնարկում չկատարվի առանց կուսակցամակերպության մասնակցության և միևնույն ժամանակ տնտեսական որգանները ազատ լինեն բծախնդիր խնամակալությունից:

բ) Գոսպլանի, ԺՏԳՄ-ի, Հողժողկոմատի և տնտեսական այլ որգանների վրա պարտականություն է դրվում՝ վճռական միջոցներ ձեռք առնել շինարարությունը հաստատուն պլանավորման յենթարկելու, նախահաշվի խախտումների դեմ պայքարելու, պարտիզանականությունն ու այլ թերությունները վերացնելու, համապատասխան որգանների կողմից սիստեմատիկ վերահսկողություն և շինարարությամբ պարապող պատասխանատու կազմակերպությունների ու անձանց համար խիստ պատասխանատվություն սահմանելու:

գ) Լուսժողկոմատը և ԺՏԳՄ-ը պարտավոր են կանոնավորել բանվորական վորակյալ ուժի և մասնագետների նոր կադրեր պատրաստելու, հներին վերապատրաստելու գործը՝ ձգտելով արդյու-

նարերության համար գլխավորապես միջակ տեխնիքական կազմ պատրաստելու:

դ) Տնտեսական և խորհրդային օրգանների վրա պարտականություն է դրվում վճռական միջոցներ ձեռք առնել՝ բարվոքելու բանվորների վիճակը, ուժեղացնելու բանվորական բնակշինարարության թափը և գլուխ բերելու բանվորական շրջաններին կանոնավոր կերպով առաջին անհրաժեշտության մթերքներ հայթայթելու գործը: Խստագույն պատասխանատվության կանչել այն անձանց և կազմակերպություններին, վորոնք ժամանակին չեն վճարում բանվորների աշխատավարձը: Պրոֆմիությունները պետք է վերահսկու լինեն, վոր տնտեսական օրգանները իրոք կատարեն կոլեկտիվ պայմանագրի պահանջները և բանվորների աշխատանքի պաշտպանության վերաբերյալ այլ միջոցները:

յե) Նշելով վոր ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար հսկայական նշանակություն ունի մասնագետներին ամեն կերպ գործի գրավելը և նրանց կանոնավոր ոգտագործումը, ԿԿ-ի պլենումը անհրաժեշտ է համարում ուժեղացնել նրանց աշխատանքի ստուգումն և խիստ պատասխանատվություն սահմանել նրանց հանձնարարված գործի համար. ընդ վորում անհրաժեշտ է, վոր մասնագետների հիմնական մասսան մեր սոցիալիստական շինարարության իրոք ակտիվ ոգնականն ու կատար ածողը լինի: ԿԿ-ի պլենումը հանձնարարում է տեղական բոլոր տնտեսական ու կուսակցական օրգաններին մոտակա ժամանակամիջոցում ուրվագծել այն կոնկրետ միջոցները, վորոնք անհրաժեշտ են մասնագետների շարքերում կատարվելիք աշխատանքների վերաբերմամբ ՀամԿ (բ) Կ ԿԿ-ի ապրիլյան պլենումի վորոշումներն իրագործելու համար:

զ) Նշելով Ալլահվերդիի և Ղափանի հանքերի հետազոտման դրական արդյունքը, ԿԿ-ի պլենումը անհրաժեշտ է գտնում շարունակել նման հետազոտությունները մեր շինարարության մյուս բնագավառներում:

III.

8. Կուսղեկավարության բացերը, նրա վորոշ չափով կտրված լինելը աշխատավոր լայն մասսաներից, բյուրոկրատիկ խեղաթյուրումների գոյությունը, բանվորական դեմոկրատիայի սկզբունքների կոպիտ խախտումը և ինքնաքննադատության բացակայությունը—այս ամենը չեր կարող չանդրադառնալ Հայաստանի պրոֆմիությունների աշխատանքի վրա: Այդ պատճառով պրոֆմիության շարքերում նկատվում են համքարականության (ցեխականության), ինքնամփոփության, պրոֆնապարծության տարրեր: Պրոֆմիությունների աշխատանքը չափազանց թույլ է մանավանդ

բանվորներին արտադրության կառավարման գործին ներգրավելու և բանվորական մասսայի կուլտուրական-կենցաղային կարիքների ու պահանջների սպասարկման ասպարեզում:

Պրոֆմիությունների ղեկավարման բնագավառում իր կատարելիք հետագա աշխատանքի ընթացքում, ԿԿ-ի նախագահությունը պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի հետևյալ հիմնական ձեռնարկումների վրա.

ա) Վերանայել պրոֆաշխատակիցների կադրերը՝ նպատակ ունենալով համապատասխան օրգանների վերընտրությամբ, վորակապես բարվոքել և մաքրել պրոֆմիությունները բյուրոկրատիկ տարրերից:

բ) Ուժեղացնել պրոֆմիությունների տնտեսական աշխատանքը նախ և առաջ մասնակից դարձնելով նրանց հիմնական շինարարության աշխատանքին, արտադրության ռացիոնալացման հարցերին, ինքնարժեքի եժանացման և արտադրական խորհրդակցությունների աշխատանքը ղեկավարելու գործին:

գ) Վճռական պայքար մղել հիմնարկություններում և ձեռնարկություններում նկատվող բյուրոկրատիզմի ու անտնտեսավարության յերևույթների դեմ, մասնակից դարձնելով այդ պայքարին բանվորների ու աշխատավորների լայն խավերին: Հանձնարարել կուսակցական և պրոֆեսիոնալ տեղական կազմակերպություններին ապահովել արտադրական խորհրդակցությունների աշխատանքի կանոնավոր ընթացքը՝ հատուկ ուշք դարձնելով նրանց աշխատանքի բովանդակության բարելավման և նրանց առաջարկությունների կոնկրետացման: Վճռաբար պահանջել տնտեսական բոլոր օրգաններից՝ ամենաուշադիր վերաբերմունք ցուցաբերել արտադրական և տնտեսական խորհրդակցությունների վորոշումների կենսագործմանը:

դ) Ձեռնարկություններում մասսայական աշխատանք ծավալելու նպատակով, վերանայել այդ աշխատանքի ձևերը և նոր մեթոդներ սահմանել, աշխատելով բարելավել կուլտուր-լուսավորական աշխատանքի վորակը և բարձրացնել բանվորների արտադրական-տեխնիքական վորակավորումը: Նշելով վոր Լուսժողկոմատի օրգանները թույլ չափով են սպասարկում բանվորներին, պլենումը գտնում է, վոր անհրաժեշտ է ուժեղացնել Լուսժողկոմատի աշխատանքը և համաձայնեցնել վերջինս պրոֆմիությունների կուլտուրական-լուսավորական աշխատանքի հետ:

յե) Վճռական պայքար մղել պրոֆմիություններում նկատվող ինքնամփոփ, համքարային (ցեխական) տրամադրությունների և կուսղեկավարությունից խուսափելու ձգտումների դեմ, վոր հնա-

բավոր է միմիայն այն դեպքում, երբ իրապես աշխուժանա պրոֆ-միութենական ֆրակցիաների աշխատանքը՝ համապատասխան կուսորգանների անմիջական ղեկավարությամբ:

IV.

9. Անբավարար ուշադրությունը դեպի գյուղի շերտավորումը, գյուղում կատարվող սոցիալ-տնտեսական պրոցեսներին վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայությունը, գյուղի նը-կատմամբ առանձին ղեկավարող ընկերների շրջանում գոյություն ունեցող սխալ հայացքը (վորով նսեմացվում է կուլակի դերը) և միևնույն ժամանակ չքավորների մեջ կատարվող աշխատանքի անբավարար լինելը—այս ամենը ուժեղացրեց վորոշ տեղերում կուլակների դիրքն այն պայքարում, վոր մղում են նրանք՝ վարկի, արտելի և կոոպերացիայի այլ ձևերի, հողաշինարարության, արոտավայրերի ու դպրոցների համար, հանդես բերելով և վորոշ վնասարար աշխատանք կոլեկտիվ տնտեսություններում, խեղաթյուրելով կուսակցության դասակարգային դիծը գյուղում:

10. Այդ յերևույթները վերացնելու համար, ԿԿ-ի պլենումը անհրաժեշտ է համարում վոր կուսկազմակերպությունները իրապես ուժեղացնեն իրենց աշխատանքը չքավորների շարքերում, ամրացնեն կուսակցության բատրակային ու չքավորական կորիզը, պայքարեն կուլակին թերագնահատելու ամեն տեսակ տենդենցների դեմ և գործնական հակահարված կազմակերպեն նրա դեմ՝ գյուղի շինարարության բոլոր ասպարեզներում: Ընդ վորում, պլենումը բոլոր կազմակերպությունների հիմնական ուշադրությունն է հրավիրում չքավոր ու միջակ գյուղացիության դաշինքն ամրացնելու խնդրի վրա:

11. Համարելով, վոր գյուղատնտեսության հետագա զարգացումը դեմ է առնում, ինչպես չքավոր-միջակ անհատական տնտեսության զարգացման, այնպես էլ կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների շինարարության և այդ շինարարությանը չքավորներին ու միջակներին մասնակից դարձնելու գործին, ԿԿ-ի պլենումը անհրաժեշտ է համարում.

ա) Ուժեղացնել այն ներդրումները, վորոնք հատկացված են առաջիկա տարիներում գյուղատնտեսությունը ընդհանրապես բարձրացնելու և տեխնիկապես վերակառուցելու նպատակով, և մասնավորապես կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունների ցանցը ընդարձակելու. միևնույն ժամանակ կուսակցական կազմակերպությունների կողմից արթուն հսկողություն սահմանել այդ ասպարիզում կատարվող աշխատանքի վրա:

բ) Կոլեկտիվ տնտեսությունների շինարարության անհրաժեշտ

տեմպն ապահովելու նպատակով, Հողժողկոմատին հանձնարարվում է մինչև 1929 թվականը հողաշինարարության յենթարկել գոյություն ունեցող կոլեկտիվ տնտեսությունները, համաձայնեցնելով հողաշինարարական աշխատանքների պլանը կոլտնտեսական շարժման հետագա զարգացման պահանջներին: Նշելով հողաշինարարական աշխատանքների անբավարար տեմպը, պլենումը հանձնարարում է Հողժողկոմատին՝ գործնական միջոցներ մշակել այդ աշխատանքն ուժեղացնելու համար:

գ) Գյուղվարկի որդաններին հանձնարարվում է միջոցներ ձեռք առնել վարկավորման գործում տեղի ունեցող կուսակցական դծի խեղաթյուրումների դեմ և ապահովել նրա ճշգրիտ կենսագործումը՝ կոլեկտիվ տնտեսությունները չքավորական ու միջակ տնտեսություններով ուժեղացնելու ուղղությամբ:

դ) Չքավորական խմբակներին ու խորհրդակցություններին մասնակից դարձնել վարկավորման, մեքենաների հայթհայթման, մեքենաագործման, հողաշինարարության և այլ աշխատանքների պլանների քննության:

յե) Գյուղատնտեսական հարկը կիրառող որդանները պետք է խստիվ հետևեն կուսակցության հրահանգներին՝ ուղիղ հաշվառման և հարկավորման բնագավառում, մանավանդ կուլակային տնտեսությունների վերաբերմամբ: Չքավորների խմբակներին պետք է ակտիվ մասնակից դարձնել հարկավորման տարկների հաշվառման աշխատանքին:

զ) Հողանտառմիությունը և Աշխատանքի Ժողկոմատը պետք է խստիվ պահպանեն վարձու աշխատանքի վերաբերյալ կանոնները մանր ու միջակ տնտեսություններում և հետևեն աշխատանքի ռեժիմի գործադրման: Այդ նպատակով անհրաժեշտ է ճշտել և բացատրել գյուղական խոշոր տնտեսություններում բանվոր վարձելու վերաբերյալ օրենսդրությունը: Անհրաժեշտ է նաև ուժեղացնել գյուղատնտեսական բանվորների սպասարկումը աշխատանքի տեսուչների կողմից:

յա) Նշելով, վոր խորհրդային տնտեսությունները չքչակա գյուղացիական տնտեսություններին համարյա վոչ մի ազդեցություն և կազմակերպչական օգնություն չեն հասցնում, ԿԿ-ի պլենումը անհրաժեշտ է գտնում՝ ուժեղացնելով հանգերձ խորհրդային տնտեսությունների շինարարությունը, ընդարձակել նրանց ազդեցությունը և օգնությունը չքչակա գյուղացիական տնտեսություններին:

բ) ԿԿ-ի գյուղբաժինը պետք է մոտ ապագայում ձեռնարկի գյուղի սոցիալ-դասակարգային դծի մանրակրկիտ ուսումնասիրության:

թ) Նկատի ունենալով, որ առանձին գյուղխորհուրդներում և տեղ-տեղ նույնիսկ գյուղական ըջիջներում գոյություն ունեն կուլակային տարրեր և կուլակային ազդեցություն, անհրաժեշտ է գյուղական կազմակերպությունները սիստեմատիկ ուսումնասիրության յենթարկել՝ նպատակ ունենալով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ յերևույթների դեմ պայքարելու համար:

Ֆ.

12. ԿԿ-ի պլենումը ամենայն վճռականությամբ դատապարտում է նախկին ղեկավարության կուսակցական անկայուն դիծը քաղաքական կարևորագույն սկզբունքային այնպիսի հարցերում, որոնք հրատապ մարտական նշանակություն ունեն Հայաստանի կուսկազմակերպությունների համար: Ազգայնության, դաշնակիցների, սպեցիֆիզմի և հակապրոլետարական այլ հոսանքների ու թեքումների դեմ պայքարելու հարցերը, ինչպես և յերիտասարդությունն այդ պայքարի վրայով դաստիարակելու խնդիրները հաճախ արծարծվել են տեսականորեն, որպես պատմական պլաններ (ընդ որում այդ բնագավառում սխալներ եյին կատարվում): Այդ խմբակների և կուսակցությունների ժամանակակից պրակտիկան, նրանց դերն ու նշանակությունը յերկրի սոցիալ-տնտեսական ներկա պայմաններում—դուրս եյին մնում ԿԿ-ի նախկին ղեկավարության տեսողության շրջանակից, մի պարագա, որի շնորհիվ թերագնահատվում եյին յերկրում գոյություն ունեցող ազգայնական տրամադրությունները և անբավարար եյին հանդիսանում նրանց գործնականորեն հաղթելու համար գործադրված միջոցները:

13. ԿԿ-ի պլենումն առանձնապես նշում է, որ նախկին ղեկավարությունը սխալ դիրք է բռնել ինտելիգենցիայի վերաբերմամբ, այն է՝ չափազանց տարվել և ինտելիգենցիայի վերնախավերին՝ առավելապես նախկին մենշևիկներին, սպեցիֆիկներին և ամենովեխականներին աշխատանքի քաշելու գործով և միանգամայն անբավարար ուշադրություն է նվիրել խորհրդային աշխատավոր ինտելիգենցիայի լայն խավերի կարիքներին և պահանջներին: Ազգայնական իդեոլոգիայի բացահայտ սմենովեխյան պրոպագանդին բավականաչափ դիմադրություն չի ցուցաբերվել, ինտելիգենցիային աշխատանքի քաշելու հարցերում բացակայել է մանևավորված ճիշտ տեսակետ: Անտես է առնված նաև աշխատավորներից ինտելիգենցիայի նոր կադրեր ներգրավելու և պատրաստելու հարցը:

14. Իդեոլոգիայի հարցերին անշեղ մոտեցման բացակայությունն արտացոլել է նաև մեր ճարտարապետության մեջ: Միջ-

նադարյան ճարտարապետության վերահաստատումը իր պրիմիտիվ տեխնիկայով, թանգությամբ, և անհարմարություններով—որը դարձնականորեն սնունդ է տալիս միմիայն հայկական նացիոնալիզմին և որը վոչ մի կերպ չի համապատասխանում սոցիալիստական շինարարության խնդիրներին, չի կարելի դնահատել այլապես, քան ազգային կուլտուրայի հարցերում բայլշևիկյան ուղիներից դուրս գալու մի փաստ:

15. Հայ կաթողիկոսության և կրոնական այլ ուղղություններին ցույց տրված վերաբերմունքի մեջ խոշոր սխալներ են կատարվել, որինակ՝ յեկեղեցական կալվածների և հողերի մի մասը մինչև վերջին ժամանակները մնացել եր հոգևորականության ձեռքում, որը չահագործում եր գյուղացիներին:

16. Ցելնելով այդ պարագայից, ԿԿ-ի պլենումը հանձնարարում է նախագահությանը.

ա) Կուսակցական կազմակերպության ուշադրությունը կենտրոնացնել գյուղում տեղի ունեցող սոցիալ-դասակարգային պրոցեսների վրա, դրանց ուսումնասիրության լայն աշխատանք կազմակերպելով, և այդ ուսումնասիրությունը մասսաների սեփականություն դարձնելով:

բ) Քաղաքական դաստիարակության սիստեմի բովանդակությունը պետք է դարձնել բուրժուական և մանր-բուրժուական իդեոլոգիայի դեմ մղվող պայքարը, սերտորեն կապելով այդ վերջինս այն պայքարի հետ, որ մղվում է գլուխ բարձրացնող կուլակի և նեպմանի դեմ, անտեսության սոցիալիստական ձևերի համար, անտեսական ինքնամփոփության տեսության դեմ, բացահայտ և ծանավանդ սքողված ազգայնականության դեմ և մեր աշխատանքի բոլոր բնագավառներում իսկական ինտերնացիոնալիզմ՝ հաստատելու համար:

գ) Աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության ասպարիզում անհրաժեշտ է ձեռք քաշել պրոպագանդի վերացական ձևերից և այդ վերջիններս կապել սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների հետ: Անհրաժեշտ է մասսաների մեջ խորացնել Անդրկովկասյան Ֆեդերացիայի և ԽՍՀ Միության գաղափարը, ավելի սերտ փոխհարաբերություններ հաստատել Անդրկովկասի աշխատավորության շարքերում, ավելի մեծ ուշադրություն նվիրել հարևան հանրապետությունների աշխատավորության ստեղծագործությունն ուսումնասիրելու գործին՝ փորձի լայն փոխանակություն սահմանելով մեր տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր ասպարեզներում: Լուսժողկոմատը, արհմիությունները, կոմյերիտմիությունը և հասարա-

կական այլ կազմակերպությունները պետք է վերանայեն իրենց կատարելիք աշխատանքը՝ այդ ասպարիզում իրենց աշխատանքն ուժեղացնելու տեսակետից:

դ) Հակապրոլետարական իդեոլոգիայի դեմ մղվող պայքարն ուժեղացնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հրատարակել մասսայական, հանրամատչելի գրականության սերիաներ՝ հակապրոլետարական կուսակցությունների և հոսանքների մասին և կուսակցական ու կոմերիտական լուսավորության ցանցի ծրագրի մեջ մտցնել թեմաներ՝ Հայաստանի հեղափոխության պատմության ու Անդրկովկասի ու ԽՍՀՄ-ի քաղաքական ու տնտեսական պատմության կարևորագույն հարցերի վերաբերյալ:

ե) Վերանայել Լուսժողկոմատի մասսայական դաստիարակչական ամբողջ ցանցը՝ այդ կազմակերպությունների (զբոսական հաստատություններ, թատրոն, կինո, ազիտացիայի և պրոպագանդի զանազան ձևերը) դասակարգային դիծն ուղղելու և աշխատավորների ավելի լայն մասսաների կարիքներին սպասարկելու տեսակետից:

զ) Հատուկ ուշադրություն նվիրել մասսաների ընդհանուր-կուլտուրական և քաղաքական դաստիարակման ճակատում աշխատավորների նոր կադրեր ստեղծելու և հներին վերապատրաստելու գործին՝ կազմակերպելով դասընթացներ, կոնֆերենցիաներ, լեղեոլոգիական այլ և այլ խորհրդակցություններ, հիմնելով մաքսիստական սեմինարներ և հետաքրքիր զանազան ընկերություններ:

VI.

17. Հայաստանի կոմերիտական կազմակերպությունը հիմնականում ուներ նույն սխալներն ու բացերը, որոնք գոյություն ունեին կուսակցմակերպության մեջ: Կուսղեկավարության սխալ տեսակետը իդեոլոգիական պայքարի հարցերում արտացոլվեց նաև կոմերիտմիության մեջ, մի պարագա, որի արտահայտությունն էր՝ թույլ պայքարը նրա շարքերում նկատվող իդեոլոգիկ տատանումների դեմ, յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության գործի վերացականությունը և կադմակերպության սոցիալական կազմի կանոնավորման գործը: ԿԿ-ի պլենումը անհրաժեշտ է համարում.

ա) Կուսկազմակերպության ուշադրությունը կենտրոնացնել այն ուղության վրա, որը տրվելու է ԼԿՅԵՄ-ը՝ յերիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության գործը լավացնելու առպարիզում, վճռականորեն մերկացնելով ամեն տեսակ թեքումները յերիտասարդության կուլտուրական-քաղաքական մակարդակը

բարձրացնելու գործում, մշակելով և գործադրելով մասսայական կուլտուրական-դաստիարակչական աշխատանքի նոր, կենդանի իրականության հետ կապված մեթոդներ:

բ) Կուսակցական տեղական կազմակերպությունները պետք է վճռական պայքար մղեն առանձին կոմերիտական կազմակերպություններում նկատվող հիվանդագին յերևույթների դեմ: Այդ աշխատանքը պետք է կատարել՝ մոբիլիզացիայի յենթարկելով յերիտասարդության հասարակական կարծիքը վերոհիշյալ յերևույթների դեմ և ծավալելով ներմիութենական դեմոկրատիան:

գ) Կոմերիտմիության կենտկոմի ուշադրությունը հրավիրել, որ անհրաժեշտ է՝ սիստեմատիկորեն բարվոքել կազմակերպության սոցիալական կազմը, միության մեջ ներգրավել բանվոր և բատրակ յերիտասարդությունը, ավելի լայն չափով մասնակից դարձնել բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներին—և մանավանդ բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարին, ուսումնասիրել յերիտասարդության շարքերում տեղի ունեցող պրոցեսները և ամենավճռական պայքար մղել կազմալուծական ու անկումային մոմենտների դեմ

VII.

18. Պլենումը բանվորուհիների և գեղջկուհիների շարքերում կատարվող աշխատանքի հիմնական թերությունն է համարում՝ կուսկազմակերպությունների թույլ մասնակցությունը աշխատանքի այդ ճյուղին, հաճախ դրա անտես առնելը, կանանց մեջ կատարվող աշխատանքի խզումը հասարակական աշխատանքից և այդ աշխատանքը բացառապես կանանց աշխատանք համարելու զաղափարը:

Կանանց աշխատավոր մասսաների կուլտուրական-կենցաղային հետամնացությունը, անտարբեր վերաբերմունքը և հաճախ չհասկանալն այն պայքարի կարևորությունը, որը մղում են մեր կազմակերպությունները՝ բանվորուհիների և գեղջկուհիների կուլտուրականությունը բարձրացնելու, նրանց կենցաղային պայմանները լավացնելու և նրանց լայն չափով սոցիալիստական շինարարությանը մասնակից դարձնելու համար—այս ամենը բնորոշում է մեր աշխատանքի վիճակն այդ ասպարիզում:

Վերոհիշյալ բացերը վերացնելու համար պետք է վճռական բեկում ստեղծել ամբողջ աշխատանքի մեջ, մեծադույն չափով մոտեցնելով վերջինս աշխատավորական ստորին մասսաներին (պրոֆմիություններ, կոոպերացիա, գյուղխորհուրդ և այլն): Անհրաժեշտ է մաքառել այդ աշխատանքի թերագնահատման դեմ,

վոր նկատվում է առանձին կոմունիստների և կուսակցությունների շրջանում, անհրաժեշտ է ամբողջ կուսակցության ուշադրությունը հրավիրել այդ ասպարիզում կատարվող աշխատանքն աշխուժացնելու վրա, պետք է առանձնապես զգայուն և ուշադիր վերաբերմունք ցուցաբերել դեպի առաջքաշվածները՝ գեղջուհիներն ու բանվորները, անհրաժեշտ է լայնորեն մասնակից դարձնել աշխատավոր կանանց խորհրդային տնտեսական կյանքին, արտադրական խորհրդակցությունների, խորհուրդների սեկցիաների, կոոպերացիայի, առողջապահական որդանների և այլ կազմակերպությունների աշխատանքին:

VIII.

19. Ազգային փոքրամասնությունների մեջ կատարվելիք աշխատանքի առանցքը պետք է կազմի «զանազան ազգությունների պրոլետարների և կիսապրոլետարների մերձեցման քաղաքականությունը՝ միասին հեղափոխական պայքար մղելու համար», միատեղ սոցիալիստական շինարարությունն առաջ տանելու համար: Սակայն այդ ասպարիզում գոյություն ունեցող մի շարք յերևույթներ վոչ միայն չեն նպաստել այդ հիմնական խնդրի լուծման, այլև խոչընդոտ և հանդիսացել, դանդաղեցրել են այդ աշխատանքը և փոխել են նրա ուղղությունը:

Առանձին ազգություններին փոխադարձաբար մոտեցնելու աշխատանքի թուլությունը, նրանց առանձնացած դրությունը, կուլտուրական-լուսավորական աշխատանքի թուլությունը, կուլտաշխատավորների պակասությունն ու նրանց թույլ պատրաստությունը (կան մոլլա դասատուներ) բացի օբյեկտիվ պատճառներից, բացատրվում են նաև նրանով, վոր մինչև այժմ գոյություն ունեցող կազմակերպչական ձևերը (ինքնամփոփ հատուկ ապարատ ԳԿ-ին կից) չեն նպաստել, այլ ավելի շատ դանդաղեցրել են ազգային փոքրամասնությունների մեջ կատարվող աշխատանքը կուսակցական-խորհրդային ընդհանուր ապարատի ղեկավարության ազդեցության և ղեկավարության մեջ դնելու գործը:

Ցեղնելով վերոհիշյալից, պլենումը հանձնարարում է նախազգուշությանը.

ա) Վերջ տալ ազգային փոքրամասնությունների մեջ կատարվող աշխատանքի կազմակերպչական տարբերություններին, դարձնելով այդ աշխատանքը կուսակցական խորհրդային բոլոր կազմակերպությունների սեփականություն:

բ) Միանգամայն անհրաժեշտ համարել ղեկավար աշխատանքի ասպարեզը առաջ քաշել ազգային փոքրամասնությունների աշխատավորներին և առաջին հերթին թյուրքերին:

գ) Միջոցներ ձեռք առնել արդյունաբերության ասպարեզը քաշելու բանվորներ և ծառայողներ՝ ազգային փոքրամասնությունների աշխատավոր տարրերից:

դ) Լուսժողկոմատի, Արհմխորհի և ԼԿՅԵՄ ուշադրությունը հրավիրել, վոր անհրաժեշտ է ուժեղացնել ազգային փոքրամասնությունների մեջ կատարվող աշխատանքը, պատրաստելով կուլտաշխատավորների կադրեր, մանավանդ ավելի հետամնաց ազգությունների շրջանում, անհրաժեշտ է հրատարակել մայրենի լեզվով գրականություն և դասագրքեր դպրոցների համար, լավացնել և ծավալել աշխատանքը բատրակների, կանանց և յերիտասարդության շարքերում:

20. Վճռաբար մերժելով վոչ տնտեսապես, վոչ էլ քաղաքականապես արդարացվող այն տեսությունը, թե պետք է բոլոր թյուրքերին, ռուսներին, յեզիդներին և ասորիներին արհեստական կերպով համախմբել առանձին շրջաններում, իբրև թե նրանց մեջ կատարվող աշխատանքը տեխնիկապես թեթևացնելու նպատակով,— պլենումն ազգային փոքրամասնությունների հետ կանոնավոր փոխհարաբերություններ հաստատելու հիմնական պայմանն է համարում նրանց իրականորեն ներգրավելը սոցիալիստական շինարարության ընդհանուր հունի մեջ: Այդ բնագավառի ճիշտ քաղաքականությունը պահանջում է այնպես լուծել հողի, քոչի, ջրի և այլ հարցերը, վոր նրանք մեծագույն չափով ապահովելով ազգային փոքրամասնությունների աշխատավոր տարրերի շահերը, նպաստեն բոլոր ազգությունների աշխատավորության կուլտուրական և տնտեսական աճման:

IX.

21. Մեր շինարարության բոլոր բնագավառներում գոյություն ունեցող սխալների, անփութության և վրիպումների դեմ պայքարելու հիմնական մեթոդն է՝ մասսայական գործողության մարդասական, կոմունիստական լոզունգի, ինքնաքննադատության լոզունգի իրագործումը:

Վերջ տալով տրոցկիստական ոպոզիցիային, կուսակցությունը հնարավորություն ստացավ ավելի շատ ուշք դարձնելու աշխատանքի թերություններին և հայտարերել կուսակցական, խորհրդային և պրոֆմիութենական կազմակերպությունների խոցերը: Մանավանդ Հայաստանի պայմաններում ինքնաքննադատության լոզունգը պետք է ոգնի թարմացնելու մեր կազմակերպությունների ամբողջ սիստեմը, բարձրացնելու աշխատավոր մասսաների ակտիվությունը, ուժեղացնի նրանց զգոնությունը և հսկողությունը սոցիալիստական շինարարության վերաբերմամբ:

Բայլևիկյան ինքնաքննադատության համարձակ և վճռական ծավալումը թե կուսակցության ներսում և թե նրա բոլոր ոգակների սիստեմում կապահովի կուսակցության պրոլետարական զիծը շեղումներից և խեղաթյուրումներից և նպաստավոր պայմաններ կստեղծի քաղաքային ու գյուղական բուրժուազիայի դեմ ավելի յեռանդուն հարձակողական պայքար մղելու համար, կարագացնի սոցիալիստական շինարարության թափը:

Վճռականորեն վանելով ինքնաքննադատության լոզունգը սահմանափակելու բոլոր տենդենցները, ԿԿ-ի պլենումն անհրաժեշտ է համարում՝ անմիջապես ստուգել քննադատությունը և արագորեն միջոցներ ձեռք առնել բացերը, սխալները ու չարարկությունները վերացնելու և մեղավորներին պատասխանատվության յենթարկելու:

Վերոհիշյալ խնդիրն իրականացնելու համար պետք է վերջ տալ ԿԿ-ի ղեկավարության անցյալում գոյություն ունեցող կտրվածությանը լայն մասսաներից և աշխատանքն այնպես կազմակերպել, որ մեր կուսակցական, պրոֆմիութենական, խորհրդային և անտեսական ու այլ որգանները մշտապես սերտ շփում ունենան իրար հետ և իրազեկ լինեն այն բոլոր հարցերին, որոնք հուզում են աշխատավոր լայն մասսաներին: Առանց այդ հիմնական նախադրյալի անկարելի յե մասսայական կանոնավոր աշխատանք կատարել, քննադատությունը ստուգել և ժամանակին անհրաժեշտ միջոցները ձեռք առնել:

Կենտրոնական և տեղական կազմակերպությունների կապն ուժեղացնելու համար, ԿԿ-ի պլենումը հանձնարարում է նախագահության՝ պատասխանատու աշխատավորներին սիստեմատիկաբար կենտրոնից տեղեր ուղարկել՝ յերկարատև աշխատանք կատարելու նպատակով:

ԿԿ-ի պլենումը հավատում է, որ ուկլոնիզմի տենդենցների դեմ պայքարելով, Հայաստանի կուսկազմակերպությունը կոմկուսի բայլևիկյան զծի անխուսափելի խեղաթյուրման և վիժեցման առաջն առավ, ամրացավ, բայլևիկյան տոկունություն ստացավ, աճեց և վոտքի կանգնեց: Պլենումը համոզված է, որ կուսակցական զծի խեղաթյուրումները հայտարերելու և նրանց դեմ հետագա հետևը մղելու համար ինքնաքննադատության լոզունգի կիրառումը ե՛լ ավելի կբարձրացնի, կառողջացնի և կամրացնի մեր կազմակերպությունը:

ՀՀ Ազգային գրադարան
NL0188352